ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ:
ՆՈՐՈՎԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՐՑԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության առջև ծառացել են բազմաթիվ նոր խնդիրներ: Ընդհանրական ձևով դրանք ներկայացվում են ***նոր Հայաստան*** կառուցելու՝ իշխանությունների առաջադրած կարգախոսում: Խնդիրը բարդ է: Մենք ունենք դրան ոչ այնքան պատրաստ քաղաքացիական հասարակություն: Բնակչության մի մասը օրվա ապրուստն ապահովելու հոգսով է զբաղված: Քաղաքական վերնախավում հայտնվածներից շատերը չունեն պետական կառավարման փորձ և այլն: Կան հաջողության կանխապայմաններ, որոնցից թերևս ամենակարևորը պետական կառույցների և ազգային հասարակագիտական հանրույթի միջև աշխատանքային կայուն կապերի ու համագործակցության հաստատումն է: Դա անպայման ենթադրում է համատեղ աշխատանք, այլ ոչ թե ճեպազրույցների ձևով մտքերի փոխանակում, կամ երբ պետական պատասխանատուն բարեհաճում է տասնհինգ-քսան րոպեով ընդունել գիտնականին կամ փորձագետին: Համազգային կարևորության հրատապ խնդիրների հետազոտական արդյունավետություն ապահովելու համար դրանք օր առաջ պետք է դառնան *պետական պատվիրատուի* և *կատարողի* (գիտական խմբի) համատեղ քննարկման առարկա: Ահա նոր մոտեցումներ պահանջող այդ հիմնախնդիրներից մի քանիսը.

-ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն,

-հայոց (ներառյալ ադրբեջանահայության) ցեղասպանության մասին հարցադրումները ներքին ու արտաքին քաղաքական դաշտերում,

-ՀՀ-ն ու Արցախը հասարակարգային զարգացման ուղիների տարբաժանքում կամ ազգային ուղու ընտրության հրամայականը,

-գոյատևման ու զարգացման միասնական օրակարգ Սփյուռքի, Արցախի և ՀՀ-ի համար:

Թվարկված հարցերը (կարող են ձևակերպվել և այլ հիմնարար հարցեր, ես սահմանափակվեցի ակնհայտներով) ենթադրում են համակողմանիորեն մշակված հայեցակարգեր, որպիսիք մենք չունենք, թեև պատմությունը մեզ դրա համար արդեն տրամադրել է ավելի քան քառորդ դար: Պատճառը նույնն է՝ աշխատանքային կապերի բացակայությունը «պատկան մարմինների» ու գիտական հանրության միջև, կապեր, որ պետք է հաստատութենական (ինստիտուցիոնալ) բնույթի լինեն:

Իշխանության ղեկն իրենց ձեռքը վերցրած թիմերը սովորություն ունեն (և դա միայն մեզ չի վերաբերում) իրենց հաշվետվություններում ընդգծել կառավարման տարիների ձեռքբերումները՝ շրջանցելով այն հարցը, թե ինչպիսին կլինեին դրանք, եթե որդեգրվեր այլ մարտավարություն, որն առաջարկել են ընդդիմադիր ուժերը կամ գիտական շրջանակները: Թվարկված հարցերից յուրաքանչյուրի դեպքում այդ հարցադրումը իմաստավորված է: Հայտնի է, օրինակ, թե մենք տնտեսական ինչպիսի անկման մեջ հայտնվեցինք՝ 1991-ին ընտրելով այսպես կոչված վայրի կապիտալիզմի ուղին: Արդյունաբերական վիթխարի մի համալիր ընդամենը 3-4 տարում ջարդոնվեց՝ իրեն սպասարկող գիտական համակարգի հետ մեկտեղ: Տարածաշրջանի արդյունաբերապես ամենից զարգացած երկիրը ըստ էության տնտեսապես ամայացավ: Այդ ընտրությունը կատարելու համար պաշտոնյաները, որոնք երկիրը հասցրեցին կոլապսի, ոչ մի պատասխանատվություն չկրեցին: Պատմությունն, իհարկե, «եթե»-ներ չի սիրում: Բայց սա այն դեպքն է, երբ ակնհայտ է, որ հանցավոր չիմացությամբ (սա լավագույն բացատրությունն է) հետխորհրդային քաղաքական վերնախավը վերափոխումների հնարավոր տարբերակներից ընտրել վատթարագույնը: Պատերազմը, որի մեջ Հայաստանի Հանրապետությունը ներքաշված էր, և որը մատնանշում էին վայրի կապիտալիզմի ուղին ընտրած պետական պաշտոնյաները, արդարացում չէ: Պատերազմող երկիրը «Նաիրիտի» պես գործարան չի քանդում, ատոմակայան չի կանգնեցնում կամ հաստոցային վիթխարի ունեցվածքը որպես մետաղի ջարդոն չի վաճառում:

Այս կարգի դիտարկումներ կարելի է անել նաև վերն առանձնացված մյուս հարցերի կապակցությամբ: Ստորև մենք կանդրադառնանք արցախյան խնդրին: Մեր դիտարկումները վերաբերում են հարցի իրավաքաղաքական ու տեղեկատվական կողմերին: Դրանց ելակետային կանխադրույթն այն է, որ կոնֆլիկտների քաղաքական/բանակցային/դիվանագիտական կարգավորման գործընթացներում տեղեկատվական պարտությանը սովորաբար հաջորդում է ընդհանուր պարտությունը:

Այժմ՝ ըստ էության:

Ղարաբաղյան կոնֆլիկտի տեղեկատվական այն կերպարում, որ հայկական կողմը ներկայացնում է միջազգային հանրությանը, բացակայում են սկզբունքային կարևորության բազմաթիվ փաստեր, որոնց իմացությունը պարտադիր է թե՛ պաշտոնական, թե՛ ժողովրդական դիվանագիտության ձևաչափերում բանակցային գործընթացների մասնակիցների համար: Կարելի է ենթադրել, որ գործի պատասխանատուները դրանք ընդհանրապես չգիտեն, այլապես այս կամ այն կերպ դրանց հնչեղություն կտրվեր: Ցավոք, դրանց թիվը շատ է: Ահա իրավաքաղաքական այդ փաստերից մի քանիսը՝ առանձնացված վեց կետում:

Առաջին: Հույժ կարևոր է այն փաստը, որ արցախահայությունը XX դարում երկու անգամ ինքնորոշվել է այլ պետության իրավադասությունից դուրս գտնվող կամ այլ կերպ՝ որևէ մի պետության մաս չկազմող և այդ իմաստով իրենից բացի որևէ մեկին չպատկանող տարածքներում՝ դրանց կարգավիճակի մասին միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Առաջին անգամ դա տեղի է ունեցել 1918 թ.[1], երբ արցախահայության լիազոր ներկայացուցիչների (ԱԼՆ) համագումարները մերժել են մուսավաթական Ադրբեջանին ենթարկվելու՝ երկրամասին թուրքերի ներկայացրած պահանջը և հռչակել Հայաստանի Հանրապետության մաս կազմելու արցախահայության վճռականությունը: Միաժամանակ, հաշվի առնելով այն ծանր կացությունը, որում հայտնված էր հայկական նորահռչակ պետությունը, ԱԼՆ համագումարները ձևավորել են Ժողովրդական կառավարություն և Ազգային խորհուրդ՝ օժտելով նրանց երկրամասի պետական կառավարման համար անհրաժեշտ բոլոր գործառույթներով[2]: 1918 թվականին Անդրկովկասն արդեն դուրս էր մնացել Ռուսական կայսրության սահմաններից, իսկ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) դե ֆակտո ճանաչված կամ դե յուրե կայացած պետություն չէր: Այն ընդամենը հռչակված էր: Արցախի հայությունը ինքնորոշվել է իրենից բացի պատմական իրավունքով որևէ մեկին չպատկանող այն տարածքներում, որտեղ մինչև Ռուսական կայսրության սահմաններում հայտնվելը կա՛մ եղել է հայկական պետության մաս, կա՛մ ունեցել է միջնադարյան տիպի անկախ կամ կիսաանկախ պետականության ձևեր (Խաչենի իշխանությունը, հայկական մելիքությունները, շահական Պարսկաստանի սահմաններում Նադիր շահի հովանու տակ ձևավորված և *Խամսայի մելիքություն* անունը ստացած նրանց միությունը, Ղարաբաղի խանությունը)[3]: Երկրամասը հռչակելով Հայաստանի առաջին Հանրապետության

---

[1] Արցախահայության լիազոր ներկայացուցիչների (ԱԼՆ) առաջին համագումարը տեղի է ունեցել 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում:

[2] ԱԼՆ հաջորդ համագումարները, բացառությամբ 7-րդ համագումարի, որը *ժամանակավոր համաձայնագիր* է ստորագրել ԱԴՀ կառավարության հետ, պաշտպանել են նույն տեսակետը:

[3] Բաքվում տարածված է այն թյուր կարծիքը, թե Ղարաբաղի խանությունը՝ որպես միջնադարյան տիպի կիսաանկախ պետականության ձև, կարելի է շահարկման առարկա դարձնել՝ այդ վարչաքաղաքական միավորի հայկական լինելը կասկածի տակ դնելու համար: Ադրբեջանցի մասնագետների միակ փաստարկն այն է, որ 1750-ականներին Պարսկաստանի կողմից խան է ճանաչվել Դաշտային Ղարաբաղից Շուշի տեղափոխված քոչվոր ցեղախմբի առաջնորդ Փանահը: Կան իրավաքաղաքական բնույթի բազմաթիվ փաստեր, որոնք հերքում են այդ կարծիքը: Ընթերցողը դրանց կարող է ծանոթանալ Դ. Բաբայանի «Ղարաբաղի խանության քաղաքական պատմությունը XVIII դարի արցախյան դիվանագիտության համատեքստում» (Եր., 2007 թ.) և Ստեփան Դադայանի «Ճշմարտությունը և կեղծիքը Ղարաբաղի «խանության» մասին» (Ստեփանակերտ, 2019, ռուսերեն) գրքերից: Սակայն կա սկզբունքային մեկ այլ փաստարկ միջնադարում Անդրկովկաս ելումուտ անող խառնամբոխ ու խառնազգի քոչ-

անկապտելի մաս՝ Արցախահայության լիազոր ներկայացուցիչների համագումարները իրենց ձևավորած Ժողովրդական կառավարության ու Ազգային խորհրդի միջոցով 1918-1920 թթ. ամբողջ ծավալով իրականացրել են երկրամասի ռազմական, տնտեսական, քաղաքական, մշակութային գործերի կառավարումը: Այդ տարիներին տարածաշրջանային ու միջազգային բարդագույն պայմաններում Արցախը եղել է դե ֆակտո անկախ վարչաքաղաքական կազմավորում՝ ինքնիշխան պետականությանը հատուկ բոլոր ատրիբուտներով:

1920 թ. ապրիլի վերջին օրերին, երբ խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակը տապալել է ԱԴՀ-ն ու հռչակել խորհրդային Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղի Թաղավարդ գյուղում տեղի ունեցած արցախահայության 9-րդ համագումարը չեղարկել է 1919 թ. ԱԴՀ հետ կնքած ժամանակավոր համաձայնագիրը և երկրամասը վերստին հռչակել Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս[4]: Այդ դեպքում էլ Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը (Ադր. ԽՍՀ) պատկանելու մասին խոսք լինել չէր կարող, քանի որ նոր ասպարեզ մտած Ադր. ԽՍՀ-ի սահմանները ո՛չ հռչակված էին, ո՛չ հաստատված: Արցախը 1920 թ. ապրիլի 28-29-ին իր ինքնորոշման վերահաստատման ակտում Խորհրդային Ադրբեջանից բաժանվելու խնդիր չուներ: Այն որևէ մեկից (տվյալ դեպքում՝ Խորհրդային Ադրբեջանից) բաժանվելու իրավական ակտով չէ, որ 1920 թ. ապրիլի 28-29-ին վերահաստատել է երկրամասը Հայաստանի առաջին Հանրապետության անկապտելի մաս հռչակելու արցախահայության քաղաքական կամքը:

Նույն կերպ արցախահայությունը ինքնորոշվել է 1991-ի սեպտեմբերին, երբ Բաքվում հրաժարվել են Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից և դարձել 1918-1920 թթ. գոյատևած ԱԴՀ իրավահաջորդը, որի կազմում ո՛չ Արցախն է եղել, ո՛չ էլ Նախիջևանը[5]: Մերօրյա Ադրբեջա-

---

վորները պետականություն չէին կարող ունենալ, քանի որ քոչվոր կյանք էին վարում: Պետությունները միշտ էլ հիմնել են նստակյաց ժողովուրդները: Փանահին և նրա մերձավորներին նույնիսկ թույլատրված չէր գերազմանատուն ունենալ Շուշիում:

[4] Մուսավաթական Ադրբեջանի հետ 1919 թ. կնքված ժամանակավոր համաձայնագրի տեքստը տե՛ս «Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов», Եր., 1992, էջ 323-327:

[5] 1918-1920 թթ. իրեն ԱԴՀ իրավահաջորդ հռչակելու մասին Ադրբեջանական Հանրապետության որոշումը հիշյալ սահմանադրական ակտում ձևակերպված է տարընթերցումներ չհարուցող հստակությամբ՝ «Ադրբեջանական Հանրապետությունը 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. ապրիլը գոյատևած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդն է» ձևակերպմամբ (*սահմանադրական ակտի* ռուսերեն տեքստի այդ պարբերության թարգմանությունը իմն է –Ա.Մ.): Նախ հետաքրքիր է, որ Բաքվի մասնագետները խուսափել են իրավական իմաստով ավելի հստակ՝ *իրավահաջորդ* եզրույթից՝ ամենայն հավանականությամբ հաշվի առնելով, որ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը այդ տարիներին այդպես էլ ձեռք չի բերել ճանաչված սահմաններ և ստացել է Ազգերի լիգա ընդունվելու մերժումը: Հետաքրքիր է նաև, որ Բաքվի «մասնագետները» հետին թվով փոխել են այն պետականության անվանումը, որի ժառանգորդն են իրենց հռչակել:

նական Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչվել է այն բանից հետո (այն ՄԱԿ է ընդունվել 1992 թ. մարտին), երբ Ստեփանակերտում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և հարակից հայկական Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների համատեղ նիստը Արցախի հարավային մասում հռչակել է ԼՂՀ անկախությունը և նույն տարվա դեկտեմբերի 10-ին հրետակոծությունների կրակի տակ կայացած հանրաքվեով հաստատել իր որոշումը[6]: Այս դեպքում էլ Արցախը չի ինքնորոշվել որևէ պետությունից բաժանվելու ակտով և հռչակվել է մերօրյա ԱՀ-ին իրավաբանորեն չպատկանող տարածքներում:

1991 թ. սեպտեմբերի 2-ից հետո, ԼՂԻՄ-ը լուծարելու մասին Բաքվում ընդունված «օրենքին» ի պատասխան, ԽՍՀՄ Պետխորհուրդը, դեռևս գործող Սահմանադրության հիման վրա վերահաստատել է իրավական այն փաստը, որ ԼՂԻՄ-ի՝ որպես ԽՍՀՄ ազգային պետական կառուցվածքի սուբյեկտի լուծարումը դուրս է Բաքվի իրավասությունից: Բաքուն այդ բանը գիտեր հրաշալի: Գիտեր նաև, որ 1991 թ. օգոստոսի 30-ի *Անկախ պետականության վերականգնման մասին* հռչակագրով և նույն թվականի հոկտեմբերի 18-ի *Անկախ պետականության սահմանադրական ակտով*, որոնցով ինքը հրաժարվել է լինել Ադր. ԽՍՀ իրավահաջորդը և վերականգնել է 1918-1920 թթ. ԱԴՀ պետականությունը, դադարում են իր առանց այն էլ անհիմն իրավունքները ԼՂ նկատմամբ: Բանն այն է, որ ԱԴՀ-ն պատմական ասպարեզը լքել է՝ չունենալով ո՛չ դե յուրե ճանաչված, ո՛չ դե ֆակտո հաստատված սահմաններ և ո՛չ էլ փաստացի վերահսկողություն հայկական այդ երկրամասում (նաև Նախիջևանում): Դրա համար էլ 1991 թ. նոյեմբերի 23-ին, երբ դեռ ԽՍՀՄ-ը չէր հեռացել քաղաքական բեմից, ընդունելով ԼՂԻՄ-ի լուծարման մասին իրավաբանորեն անիմաստ «օրենքը», Բաքուն այն հրապարակեց ԽՍՀՄ լուծարումից հետո՝ 1992 թ. հունվարին: Փաստաթուղթը ընդունման պահից իրավաբանորեն անհեթեթ էր ոչ միայն այն պատճառով, որ Լեռնային Ղարաբաղի (նաև Նախիջևանի) հետ Բաքուն իրավական որևէ առնչություն արդեն չուներ, այլ նաև այն պատճառով, որ հայտնի չէ, թե իրավական որ դաշտին է այն վերաբերում՝ խորհրդայի՞ն, թե՞ հետխորհրդային:

Շարադրված իրավական կարևոր փաստերն այն մասին, որ 1918

Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն անունը *սահմանադրական ակտում* փոխարինված է ***Ադրբեջանական Հանրապետություն*** անվամբ: Ամենայն հավանականությամբ այդ «խմբագրական աշխատանքը» կատարվել է, որպեսզի գործին անտեղյակ մարդկանց մեջ տպավորություն ստեղծվի, թե վերականգնվում է նույն պետականությունը (տե՛ս «Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики» // «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.):

[6] Դրանք Արցախի այն շրջաններն էին, որտեղ ադրբեջանական իշխանություններին չէր հաջողվել զանգվածային ջարդերով դուրս մղել հայ բնակչությանը, ինչպես Սումգայիթից սկսած իրագործել էին Ադր. ԽՍՀ մյուս շրջաններում:

թ. հուլիսին և 1991 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղը ինքնորոշվել է իրենից բացի ոչ մեկին չպատկանող տարածքներում, և որոնք ամրագրված են 1918-1920 թթ. Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների որոշումներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունած հռչակագրում, դուրս են մնում կոնֆլիկտի իրավաքաղաքական ու տեղեկատվական կերպարից ու միջազգային հանրությանն ուղղված մեր ուղերձներից:

Այդ փաստաթղթերը բնավ չեն արժեզրկում մեր գոյապայքարում 1918-1992 թթ. հայկական երեք հանրապետությունների՝ Արցախի հետ համատեղ կամ միմյանցից անկախ կատարած իրավական քայլերն ու այն փաստաթղթերը, որոնցում դրանք ամրագրված են: Չեն արժեզրկվում նաև Ազգերի լիգայի ու խորհրդային իշխանությունների՝ արցախյան հարցին վերաբերող իրավական կամ քաղաքական որոշումները: Դրանց մեծ մասը ընդունվել է քաղաքական կոնկրետ իրավիճակների կապակցությամբ: Նույն տարիներին հայկական կողմի ձեռնարկած քայլերը մեծ մասամբ եղել են անվրեպ: Բայց նկատել է պետք, որ հայոց իրավաքաղաքական միտքը ծանրացել է հենց այդ փաստաթղթերի իրավազորության կամ ձեռնարկած քայլերի քաղաքական նպատակահարմարության վրա՝ մի տեսակ ստվերում թողնելով Արցախի ընդունած այն ակտերի նշանակալից իրավական իմաստները, որոնց մասին նշվեց վերը: Որպես փաստաթղթերի օրինակներ, որոնց մեր իրավաբաններն ու քաղաքագետները դիմում են առաջին հերթին, կարող ենք նշել 1988 թ. փետրվարի 20-ին ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի ընդունած որոշումը[7], 1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ ԳԽ և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացման մասին համատեղ որոշումը[8], ԽՍՀՄ ԳԽ 1990 թ. ապրիլի 3-ին ընդունած՝ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը[9] և այլն: **Դրանք ընդունվել են ԽՍՀՄ տարիներին, երբ արցախյան խնդրի լուծումը կապվում էր ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների հետ: Սրանք բոլորը հայանպաստ են եղել, բայց իրավական ներուժով զիջում են առաջին կետում նշվածներին, որոնցում խոսքը ոչ թե Ադրբեջանից անջատվելու, այլ իրենից բացի ոչ մեկին չպատկանող տարածքներում օրինաբար իրականացված ինքնորոշման մասին է:**

Փաստաթղթերի այն փաթեթում, որում առաջին պլան է մղվում Ադրբեջանից անջատվելու իրավական ակտի օրինականության հիմնավորումը, առանձնանում է 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ ԳԽ ընդունած՝ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ

---

[7] Տե՛ս «Советский Карабах», 21 февраля 1988 г.:

[8] Տե՛ս https://www.aniarc.am/2018/12/01/december-1-1989-decision/

[9] Տե՛ս «Ведомости Верховного Совета СССР», 1989, № 3, էջ 14:

կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը, որին ուղղակի հղում է կատարված 1991-ի սեպտեմբերի 2-ին ընդունված ***ԼՂՀ անկախության մասին հռչակագրում***[10]: Որպես պետաիրավական ակտ փաստաթուղթը նկատի է առնում «…երկրում ստեղծված վիճակի բարդությունն ու հակասականությունը, Միության ապագայի, իշխանության և կառավարման միութենական կառուցվածքների ճակատագրի անորոշությունը» և այդ պայմաններում առաջնորդվում է 1918-1920 թթ. ադրբեջանական պետականության վերականգման մասին Բաքվում ընդունված որոշման իրողությամբ: Այն նախ և առաջ արձանագրում է Ադրբեջանական Հանրապետության կողմից «1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման» հռչակումը, որն *Արցախ-Ադրբեջան* հարաբերությունները դիտարկում է խորհրդային պետաիրավական համակարգից դուրս՝ վերադարձնելով դրանք 1918-1920 թթ. իրավաքաղաքական իրողությունների դաշտ, երբ Լեռնային Ղարաբաղը մաս չի կազմել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությանը: Բայց, ինչպես նշվում է հռչակագրում, նկատի ունենալով «երկրում ստեղծված վիճակի հակասականությունն ու… անորոշությունը», որպես անկախացման ակտի իրավական հիմք ընդունվում են նաև ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենքները, «որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն լուծել իրենց պետական-իրավական կարգավիճակի մասին հարցը»[11]: Փաստորեն ***ԼՂՀ անկախության մասին հռչակագիրը*** համարժեք իրավական պատասխան էր ***Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին սահմանադրական ակտին***՝ անկախ այն բանից, թե ինչպես են այն մեկնաբանում Բաքվում. որպես վերը հիշատակված 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքի համաձայն ԽՍՀՄ-ից դուրս գալո՞ւ, թե՞ Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը վերականգնելու ակտ: Այդ երկու հնարավոր մեկնաբանությունները բացորոշ ներկայացված են 1991 թ. հոկտեմբերի 18-ին Բաքվում ընդունված «Պետական անկախության սահմանադրական ակտում», և ԼՂՀ անկախության հռչակագիրը պետք է դրանց միաժամանակ անդրադառնար, ինչը և արված է: Բայց հիշյալ սահմանադրական ակտի գլխավոր իրավական բովանդակությունը, այնուամենայնիվ, Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարումը և 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգնումն է, ինչից և բխում է իրավական այն փաստարկը, որ 1991-ին ԼՂՀ-ն անկախություն է հռչակել Ադրբեջանա-

[10] Տե՛ս «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար)», էջ 94-96:

[11] «Ведомости Верховного Совета СССР», с. 14.

կան Հանրապետությանը չպատկանող տարածքներում և այսօր էլ պետականորեն վերահսկում է այդ տարածքները:

Երկրորդ: 1988-ի փետրվարին *Ադրբեջան - Լեռնային Ղարաբաղ* վերաբորբոքված կոնֆլիկտը սկիզբ է առել 1918 թվականի ամռանը, երբ Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերը փորձել են զենքի ուժով ստիպել Արցախին ենթարկվել ԱԴՀ-ին՝ արհեստածին մի պետականության, որը հիմնվել է ոչ թե Արևելյան Անդրկովկասի ժողովուրդների, այլ ռազմական ներխուժումով տարածաշրջան մտած թուրքական բանակի կողմից: **Արցախահայության լիազոր ներկայացուցիչների համագումարները, որ լեգիտիմության տեսակետից բացառիկ ազգային կառույց են եղել ողջ տարածաշրջանում, մերժել են այդ պահանջները**: 1918 թ. հոկտեմբերի 18-ին Մամնայի մոտ Արցախի պաշտպանական ուժերը ջարդել են թուրքական այն զորագունդը, որը, խախտելով պայմանավորվածությունը, Շուշիից շարժվում էր դեպի Կարյագինո՝ միավորվելու մուսավաթական ուժերին՝ Արցախի վրա միասնաբար գրոհ ձեռնարկելու համար: Դա եղել է Արցախի Սարդարապատը: Արցախի պաշտպանական ուժերին հաջողվել է այդտեղ թուրքերին ջախջախել գլխովին (2018 թ. մենք հանիրավի լռության մատնեցինք Մամնայի ճակատամարտի 100-ամյակը): Այդ ճակատամարտը, դրան հաջորդած՝ անգլիացի գեներալ Ուիլյամ Թոմսոնի գլխավորած Անտանտի դաշնակից ուժերի միջամտությունը *ԱԴՀ-Արցախ* կոնֆլիկտին, վերջապես 1919-1920 թվականներին արցախյան խնդրի արծարծումները Ազգերի լիգայում հաստատումն են այն փաստի, որ արդեն իսկ այդ տարիներին *ԱԴՀ-Արցախ* կոնֆլիկտը բնույթով միջազգային զինված հակամարտություն էր: Դրանք ոչ թե սոսկ տարածաշրջանի պատմության, ոչ թե կոնֆլիկտի նախապատմության, այլ դրա **սեփական պատմության**[12] արձանագրված փաստեր են, որ հատուկ **նշանակություն են ձեռք բերում հակամարտության կարգավորման ու հանգուցալուծման** ընթացքում: Պատահական չէ, որ հաճախ հենց «*կոնֆլիկտի սկիզբ*» եզրի շուրջ կատաղի վեճերից են սկսվում հակամարտության կարգավորման բանակցությունները: Կողմերը գիտակցում են, որ բուն հարցադրումն ունի մեկնակետային նշանակություն: Միջնորդների դիրքորոշումը այդ հարցում տարբեր կարող է լինել՝ կախ-

[12] *Կոնֆլիկտի սեփական պատմություն* (կամ *կոնֆլիկտի բուն պատմություն*) հասկացության նորքո հասկանում ենք հիմնախնդրի նախապատմությանը հաջորդած այն փուլը, երբ այն ընդունում է բաց հակամարտության բնույթ և դառնում միջազգային կարգավորման առարկա: Այդ իմաստով Ադրբեջան-Արցախ կոնֆլիկտի՝ 1918-ից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի բոլոր իրադարձություններն ու փաստերը վերաբերում են դրա ***սեփական պատմությանը*** և չեն կարող դուրս թողնվել բանակցային գործընթացից: Հասկացությունը սկզբունքային նշանակություն է ձեռք բերում բանակցային գործընթացում կոնֆլիկտների էությունն ու բնույթը ներկայացնելու, դրանցում սուբյեկտիվիզմը հաղթահարելու ընթացքում: Այդ մասին տե՛ս **Ա. Մանասյան,** Պատմական փաստարկները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, «21-դար», թիվ 4(74), 2017, էջ 17-46:

ված այն բանից, թե ինչ է թելադրում նրանց շահը, կամ արդյոք տեղյա՞կ են նրանց փորձագետները **կոնֆլիկտի սեփական պատմությանը**: Ղարաբաղյան հակամարտության դեպքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը ներկայացնող Ֆրանսիան, ԱՄՆ-ը և ՌԴ-ն հիմնավոր շարժառիթներ ունեին (և ըստ երևույթին նախկին իներցիայով դեռ ունեն) 1988-ը Ղարաբաղյան հակամարտության սկիզբ համարելու համար: Խնդիրը միայն կոնֆլիկտն իր պատմությունից բեռնաթափելը և բանակցային գործընթացը պարզեցնելը չէ, ինչպես հաճախ ներկայացվում է: Հակամարտության սկզբի ընտրությունը Արևմուտքի տեսակետից պետք է կապվեր ԽՍՀՄ լուծարման և նախկին միութենական հանրապետությունների սահմաններում նորանկախ հանրապետությունների ճանաչման հետ[13], վճիռ, որ Արևմուտքն իր թղթապանակում ուներ արդեն իսկ 1988-ին (հնարավոր է՝ և դրանից առաջ)[14]: ԵԽ խորհրդարանական վեհաժողովը այդ մոտեցումը ամրագրել է 1994 թ. հուլիսի 4-8-ը Վիեննայում տեղի ունեցած նիստում ընդունված «Քաղաքական և անվտանգության հարցերի վերաբերյալ» բանաձևում, որում ասված է. «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բռնկվել է 1988 թվականին (ընդգծումը մերն է՝ Ա. Մ.) և հազարավոր զոհերի ու մոտ մեկ միլիոն գաղթականների առաջացման պատճառ է դարձել»[15]: Այդ դիրքորոշումը մինչ այդ որդեգրել էր 1992 թ. մարտին ձևավորված ԵԱՀԽ/ԵԱՀԿ Մինսկի խումբը:

1991-ին իր սահմաններում անկախանալու հոգսով մտահոգ Ռուսաստանի Դաշնությանը ևս այդ մոտեցումը ձեռնտու էր:

Իսկ ահա Բաքվի վերլուծաբանները աշխատում են որպես հակամարտության սկիզբ ամրագրել 1992-ի մայիսին «հայերի կողմից Շուշիի գրավումը», ինչպես դա Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված ռուս-ամերիկյան Դարտմուտյան խորհրդաժողովի ժամանակ համառորեն, բայց անհաջող փորձում էր անել Ադրբեջանական Հանրապետության նախկին արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովը[16]:

Զինված հակամարտության պատմությունն ունի 100, այլ ոչ թե 30

---

[13] Բաքվի համար Արևմուտքի այդ որոշումը շահարկման հրաշալի նյութ է դարձել: Նրա փորձագետները հաճախ են ընդգծում, որ հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները ճանաչվել են Uti Possiditis Juris սկզբունքի համաձայն, որն առավելապես վերաբերում է նախկին գաղութներում գոյություն ունեցած վարչական սահմաններում նոր պետական կազմավորումների ձևավորմանը: Մոռանում են, որ դա կատարվում էր տարածքների վերաբերյալ միջազգային այլ իրավական հիմքերի բացակայության պայմաններում, որպիսիք սովորական երևույթ էին նախկին գաղութներում: Ի դեպ, սկզբունքը որպես միջազգային իրավունքի նորմ դիտելու փորձերը կոշտ քննադատության է ենթարկվում միջազգային իրավունքի ամենահեղինակավոր մասնագետների կողմից, որոնք անվիճելի են դարձնում նրա «ադրբեջանական մեկնաբանության» կեղծությունը:

[14] Այդ մասին մանրամասն տե՛ս **Ա. Մանասյան**, Ղարաբաղյան հակամարտությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում, «21-դար», թիվ 4(62), 2015, էջ 47-77:

[15] https://bit.ly/2mw0Sl0

[16] Դարտմուտյան խորհրդաժողովում մշակված *Շրջանակային համաձայնագրի* տեքստը տե՛ս https://bit.ly/2Xldngg

տարվա պատմություն, ինչպես սովորաբար ներկայացվում է: Թեպետ այս փաստն ունի հակամարտության հետ կապված արդեն իսկ կեղծված հարցադրումները վերափոխելու ներուժ, այն նույնպես մեր կողմից չի ընդգծվում և չի ընդգրկվում խնդրի իրավաքաղաքական ու տեղեկատվական փաթեթներում:

Երրորդ: Արևելյան Անդրկովկասի, Հյուսիսային Արցախի և Նախիջևանի հայության ցեղասպանությունը Հայոց ցեղասպանության՝ պանթուրքական[17] ծրագրով մարդկության դեմ XX դարում կատարված այդ հանցագործության փուլերից մեկն է: Ոճիրն իրագործել են Օսմանյան կայսրությունը, հանրապետական Թուրքիան և վերջինիս կողմից 1918-ին Անդրկովկասում հիմնված ԱԴՀ-ն: 1918 թ. դեպի Բաքու շարժվելու ճանապարհին թուրքական կանոնավոր բանակը բնաջնջել է տասնյակ հայկական բնակավայրեր, իսկ քաղաքը գրավելուց հետո՝ սպանդի ենթարկել ավելի քան 30 հազար հայերի: 1918 թ. Արևելյան Անդրկովկասում՝ Օսմանյան կայսրության սահմաններից դուրս թուրքական կանոնավոր բանակի կողմից հայ խաղաղ բնակչության կոտորածը Հայոց ցեղասպանության փաթեթում առանձնահատուկ փաստ է: Կատարված ոճիրը հերքելու համար Անկարայի կողմից մեր օրերում բերվող այն «փաստարկը», թե իբր կայսրությունը իր անվտանգության նկատառումներով ընդամենը տարհանել է հայ բնակչությանը, և որ մարդկանց քարավանների հետ ճանապարհին պատահած «դժբախտ պատահարները» ցեղասպանություն որակել չի կարելի, այս դեպքում արժեզրկվում է, քանի որ ոչ թե խաժամուժը կամ ավազակային խմբերը, այլ թուրքական կանոնավոր բանակն է (!) իր երկրի սահմաններից դուրս (!) իրագործել հայերի զանգվածային ջարդեր միայն այն բանի համար, որ նրանք հայ են (!):

Թուրքական կանոնավոր բանակը 1918 թվականին Օսմանյան կայսրության սահմաններից դուրս Արևելյան Անդրկովկասում կոտորել է հայ խաղաղ բնակչությանը, և ցեղասպանական անհերքելի այս փաստը իր կարևորությանը համարժեք ձևով մենք չենք ներկայացնում միջազգային հանրությանը:

---

[17] Մենք գտնում ենք, որ Ստամբուլում կամ Անկարայում մշակվող ագրեսիվ ազգայնականության այն ծրագրերը, որ սովորաբար ներկայացվում են որպես ***պանթյուրքական***, իրենց գաղափարախոսության, պաթոսի ու շարժիչ ուժի տեսակետից **ավելի շուտ պանթուրքական են, քան պանթյուրքական**: Միջինասիական թյուրք ժողովուրդներն ու նրանց մերօրյա պետական կազմավորումները կապ չունեն Հայոց ցեղասպանության ոճիրի հետ, որ իրագործել են Օսմանյան կայսրությունն ու հանրապետական Թուրքիան: Վերջինս մեր օրերում փորձում է ոճրի մերժման հարցի շուրջ համախմբել ողջ թյուրքական աշխարհը (ի դեպ, նա նույն մարտավարությանն է հետամուտ նաև ղարաբաղյան հարցում)՝ Միջինասիական թյուրքական հանրապետությունները դրանում տեսնում են իրենց՝ Հայոց ցեղասպանության մեղսակիցը դարձնելու վտանգ և ոգևորված չեն թյուրքական աշխարհը առաջնորդելու Անկարայի հավակնություններով: Զուտ թուրքական, այլ ոչ թե պանթյուրքական է նաև մեր օրերում հրապարակ նետված **նոր օսմանիզմի նախագիծը, որն ըստ էության պանթուրքական, այլ ոչ թե պանթյուրքական նախագիծ է:**

Չորրորդ: Խորհրդային Ադրբեջանը հիմնվել է որպես ոչ ազգային (արտազգային) սոցիալիստական հանրապետություն և մինչև 1930-ական թվականները չի ունեցել տիտղոսակիր ազգ: Բնիկ հայերն ու իսլամադավան ժողովուրդները և տարածաշրջանում բոլորից ուշ բնակություն հաստատած կովկասյան թաթարները դիտվել են որպես ինտերնացիոնալ, տիտղոսակիր ազգ չունեցող այդ հանրապետության հիմնադիրներ: 1930-ական թվականներից սկսած՝ ադրբեջանական ազգ կառուցելու ստալինյան նախագիծը արտոնել է ոչ միայն բնիկ մահմեդականների բռնի ադրբեջանականացումը (գործնականում՝ թուրքացումը, մի բան, որ, պետք է ենթադրել, չկար Ստալինի մտադրություններում), այլև լռության քողի տակ հանրապետության հայության նկատմամբ իրագործվող տնտեսական ու քաղաքական հալածանքները, որ 1988-1991 թթ. սումգայիթյան եղեռնից սկսած՝ վերաճեցին արյունալից ջարդերի: 1918 թ. Արևելյան Անդրկովկասի հայության՝ թուրքական կանոնավոր զորքերի սկսած ցեղասպանությունը շարունակել են ԱԴՀ-ն և նրան փոխարինած Ադր. ԽՍՀ-ն ու մերօրյա ԱՀ-ն: Վերջինիս քաղաքական վարքը 1991-1994 թվականներին և 2016-ի քառօրյա պատերազմի օրերին հաստատում են, որ այն կրում է 1918-ին օսմանյան թուրքից փոխանցված ցեղասպանածին մշակույթի գեներ:

XX դարում պատմական բնակության իր տարածքներում ցեղասպանվել է Նախիջևանի, Հյուսիսային Արցախի ու Արևելյան Անդրկովկասի հայությունը՝ Խորհրդային Ադրբեջանի հիմնադիր բնիկ ազգային համայնքներից մեկը: Դա բացառիկ երևույթ է XX դարի պատմության մեջ, բայց այդ փաստը նույնպես դուրս է մնում մեր կողմից միջազգային հանրությանը ներկայացվող *Ադրբեջան-Արցախ* հակամարտության քաղաքական կերպարից:

Հինգերորդ: Այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի և Եվրոպայի նախաձեռնությամբ 1991-1992 թթ. հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները ճանաչվեցին նախկին միութենական հանրապետությունների սահմաններում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացներում դիվանագիտական ու բանակցային փորձառություն չունեցող ՀՀ-ին և ԼՂՀ-ին աննկատ մտցրել են հակամարտության էությունն աղավաղող հասկացությունների մի փակուղի: Ցայսօր մեր դիվանագիտությանը չի հաջողվել բանակցային խոսույթից դուրս մղել կամ ճշգրտել ակնհայտորեն կեղծ, հիմնախնդրի անմիջական իրավական ու փաստական հիմքերին և նույնիսկ հանրահայտ աշխարհագրական իրողություններին բացահայտորեն հակասող, մեզ համար ծուղակների դեր կատարող այդ հասկացություններից որևէ մեկը: Տիպական օրինակներ են **«Լեռնային Ղարաբաղի շուրջ գրավյալ տարածքներ» և «Լեռնային Ղարաբաղի շուրջ անվտանգության գոտի»** հասկացությունները: Բավական է նայել քարտեզին՝ համոզվելու համար, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) դուրս չի ե-

կել աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) սահմաններից, առավել ևս նրա շուրջ չի գրավել տարածքներ որպես անվտանգության գոտի: Բանակցային գործընթացում բացահայտ խեղաթյուրումով *Լեռնային Ղարաբաղ* աշխարհագրական տարածքը նույնացվում է նախկին ԼՂԻՄ-ի հետ և ամփոփվում նրա վարչական սահմաններում: Իրականում ԼՂԻՄ-ը աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի մի մասն էր միայն: Ադրբեջանական կողմի ջանքերով բանակցային խոսույթում ներդրված այդ նենգափոխությամբ քողարկվում է ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի սկզբունքային կարևորության որոշումը (այն, ի տարբերություն նախորդ օրն ընդունած որոշման, ո՛չ քննարկվել է, ո՛չ դրվել քվեարկության), որով որպես ՀԽՍՀ-ից ԼՂ բռնի օտարման փոխհատուցում նախատեսվում էր ողջ աշխարհագրական ԼՂ-ին տալ լայն իրավունքներով ինքնավար մարզի կարգավիճակ: Կովբյուրոյի որոշման մեջ այդպես էլ գրված է՝ «Нагорный Карабах оставить[18] в пределах Азербайджанской ССР, **предоставив ему широкую областную автономию»[19]:** Այն, որ Կովբյուրոն նախատեսում էր հայկական ինքնավար մարզում ներառել ողջ աշխարհագրական Լեռնային Ղարաբաղը, պարզ երևում է այդ տարիների ռուսալեզու փաստաթղթերում (հարցին վերաբերող պետական ու կուսակցական փաստաթղթերը այդ տարիներին գրվում էին ռուսերեն), որոնցում ինքնավար մարզը անվանված էր *Автономная область Нагорного Карабаха (АОНК):* Ի խախտումն առանց այն էլ չընդունված և բռնությամբ գործողության մեջ դրված Կովբյուրոյի որոշման՝ Բաքուն 1923-ին հայկական մարզը դեկրետավորել է ԼՂ մի մասի վրա միայն: Անդրկենտգործկոմի դեկրետում գրված է՝ **«Образовать из армянской части Нагорного Карабаха автономную область»[20]**: Այդ թալանին օրինական տեսք տալու համար 1936-ին ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունման կապակցությամբ մարզն անվանափոխել է՝

---

[18] Այս *оставить (թողնել)* բառը նույնպես լայնորեն շահարկվում է ադրբեջանական մասնագետների կողմից, որոնք պնդում են, թե «թողնել կարելի էր այն, ինչ եղել է»: Սակայն այս «փաստարկը» հերքելը դժվար չէ, քանի որ Լեռնային Ղարաբաղը մինչ այդ որոշումը երբևիցե Ադր. ԽՍՀ կազմում չէր եղել, որպեսզի այն թողնվեր նրա սահմաններում: Իրականում Կենտրոնը ԼՂ հարցը Կովբյուրոյի նիստի քննարկմանն է դրել հենց նրա համար, որ ԼՂ-ն, որ Բաքվում խորհրդային իշխանության հաստատման օրը իրեն հռչակել էր Հայաստանի անկապտելի մաս, տրվի Ադր. ԽՍՀ-ին: Եթե ԼՂ-ն լիներ Ադր. ԽՍՀ կազմում, Կենտրոնը այդ հարցը Կովբյուրոյի նիստ ընդհանրապես չէր բերի:

[19] «Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов», с. 650: Նույն այս փաստաթուղթը Բաքուն 1989 թ. հրապարակել է «К истории образования Нагорно-Карабахской автономной области (1918-1925)» վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում, որտեղ հետին թվով «խմբագրված» է Կովբյուրոյի նիստի արձանագրությունը (տե՛ս նշված ժողովածուն, էջ 92): Որոշման տեքստում Բաքուն ավելացրել է չկայացած քվեարկության «արդյունքներ»՝ «Քվեարկում են՝ կողմ՝ 4, ձեռնպահ՝ 3»: Բաքուն կեղծիքը կատարել է ինքնավստահ անփութությամբ: Բանն այն է, որ նիստին մասնակցել է Կովբյուրոյի ութ անդամ: Քվեարկության արդյունքում, եթե այն տեղի ունենար, ութ ձայն էլ պիտի լիներ, բայց Բաքվի «խմբագիրները» դրանցից մեկին (և հայտնի չէ, թե որ մեկին) ընդհանրապես զրկել են ձայնից:

[20] «Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов», с. 669-670.

Автономная область Нагорного Карабаха (АОНК) անվանումը փոխարինվել է *Нагорно-Карабахская автономная область (НКАО)*: 1920-ական թվականներին բոլշևիկյան կենտրոնի թույլտվությամբ, որը որոշել էր արտազգային Խորհրդային Ադրբեջանը դարձնել Արևելքում «կարմիր հեղափոխության» տարածման/արտահանման առաջադիրք, Բաքուն վարչականորեն ծվատել է Լեռնային Ղարաբաղը և մարզը դեկրետավորել նրա գրեթե մեկ քառորդի վրա: Այսօր նրան հաջողվել է մարզից մի քանի անգամ մեծ աշխարհագրական Լեռնային Ղարաբաղ/Արցախը նույնացնել ԼՂԻՄ-ի հետ՝ հետին թվով արդարացնելով նաև հայկական մարզը ԼՂ մի մասի վրա դեկրետավորելու իր քայլը: Այնինչ բավական է կարդալ Կովբյուրոյի որոշումը (իսկ Ադր. ԽՍՀ սահմաններում Արցախի հայտնվելու մասին ուրիշ որևէ այլ հիմք չկա) և նայել ֆիզիկական քարտեզին, որպեսզի պարզ լինի, որ այսօր ԼՂՀ կողմից պետականորեն վերահսկվող տարածքները այն տարածքներն են, որ, ըստ այդ որոշման, պետք է լինեին ԼՂԻՄ սահմաններում:

Այն տարածքները, որոնցում Արցախի Հանրապետությունը իրականացնում է պետական իշխանություն, աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի սահմաններում են: Լեռնային Ղարաբաղից դուրս կամ նրա շուրջ Արցախը տարածքներ չի գրավել կամ ազատագրել: Նա վերահսկում է մի մասը միայն այն տարածքների, որ, ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի որոշման համաձայն, պետք է լիներ ԼՂԻՄ-ի սահմաններում: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) կենտրոնական շրջանները և ամբողջ Հյուսիսային Արցախը, այդ փաստաթղթի համաձայն (որ Ադր. ԽՍՀ-ում Լեռնային Ղարաբաղի հայտնվելու միակ «հիմքն» է), օկուպացված են Ադրբեջանական Հանրապետության կողմից: Այս փաստը դուրս է մնում *Ադրբեջան-Արցախ* հակամարտության քաղաքական կերպարից և միջազգային հանրությանն ուղղված տեղեկատվական մեր ուղերձներից: Հայկական դիվանագիտությունը ավելի քան քառորդ դար տևող բանակցություններում չի կարողացել հասնել նրան, որ բանակցային խոսույթում ԽՍՀՄ ազգային վարչաքաղաքական միավոր *Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը* տարբերակվի աշխարհագրական Լեռնային Ղարաբաղից:

Վեցերորդ: Ավելի քան քառորդ դար առաջ՝ 1992 թ. փետրվարի 26-ի գիշերը, հայկական կողմից նախապես թողնված միջանցքով Խոջալուից դուրս եկած բնակիչներն ընդհուպ մոտեցել էին Աղդամին և կարող էին մտնել Ադրբեջանի ժողճակատի վերահսկողության տակ գտնվող քաղաք (դրանք մեծ մասամբ Ուզբեկստանից հեռացած և հատուկ մտադրությամբ այստեղ բերված թուրք-մեսխեթցիներ էին): Բայց հենց քաղաքի դարպասների մոտ ռադիոկապով հրահանգ են ստացել շարժվել դեպի Շելլի գյուղը: Գիշերվա քողի տակ, դարձյալ Ադրբեջանի ժողճակատայինների վերահսկողության տակ գտնվող տարածքում, տեղի է ունենում Խոջալուից դուրս եկած բնակիչների սպանդը, փաստ,

որին անդրադարձել է Ադրբեջանական Հանրապետության այն ժամանակվա նախագահ Այազ Մութալիբովը չեխ լրագրողուհի Դանա Մազալովային տված հարցազրույցում՝ հստակ փաստարկելով, որ այդ ոճիրը հայերի գործը չէ: Հայկական կողմը տիրապետում է հսկայական փաստական նյութի՝ կատարվածը ժողճակատայինների կողմից նախապես պլանավորված լինելու և հենց նրանց կողմից այդ սպանդն իրագործելու մասին, սակայն տարիներ շարունակ թերագնահատվել է Աղդամի մերձակայքում տեղի ունեցածի քաղաքական նշանակությունը հակամարտության կերպարի ձևավորման գործում: Բաքուն գործել է տեղեկատվական պատերազմի բոլոր տեխնոլոգիաների ու գործիքների կարևորության գիտակցումով: Տարիներ շարունակվող մեր կրավորական ու անհասկանալի պահվածքը թույլ է տվել նրան այդ վանդալիզմը վերագրել հայերին և դրանով *Խոջալուն* հավասարեցնել *Սումգայիթին* (ադրբեջանական կայքերը հաղորդում են, որ *Խոջալուն* որպես ցեղասպանական ակտ արդեն ճանաչել են 16 երկիր և ԱՄՆ 24 նահանգ): Ավելին, ադրբեջանական կողմն այսօր դրա համար օգտագործում է հայ բարձրաստիճան որոշ գործիչների չմտածված, չկշռադատված գնահատականներն ու արտահայտությունները, որոնք տեղեկատվական պատերազմի բնույթին անտեղյակության և, թող թույլ տրվի ասել, այդ հարցերում անգրագիտության արդյունք են:

***Խոջալուն* պետք է փոխարինվի *Աղդամով,* և դրա համար մենք բոլոր հիմքերն ունենք՝ հաստատված, հավաստի փաստերի ու վկայությունների մեծածավալ փաթեթի տեսքով: Պատմությունն արդեն իսկ մեզ դրա համար տրամադրել է ավելի քան քառորդ դար, սակայն մենք չենք կատարել նրա հանձնարարությունը: *Խոջալուն* փոխարինել *Աղդամով* և այդ տեսակետից նոր լույս սփռել դեպքի հետ կապված մյուս բոլոր հարցերի վրա. սա է արցախյան հարցի տեղեկատվական ճակատում մեր անհետաձգելի խնդիրներից մեկը:** Բայց ինչպես հաճախ է պատահել մինչ այժմ, հիմնախնդրով զբաղվող «պատկան մարմինները» և պատասխանատու այրերը նման մի տեղեկատվություն ստանալուց հետո սովորաբար ասում են՝ «Այո՛, հասկացա», ու թույլ տալիս հաջորդ սխալը, առանց հասկանալու, որ խնդիրը, ցավոք, դրանից հետո է սկսվում միայն: Բանն այն է, որ հակառակորդի կողմից արդեն աշխարհին հրամցված *«Խոջալուի ցեղասպանություն»* առասպելի քողազերծումը հատուկ բնույթի մասնագիտական աշխատանք է, որը ենթադրում է նուրբ, խորապես մտածված ծրագիր այն փորձագետների կողմից, որոնք տիրապետում են թե՛ կոնկրետ նյութին, թե՛ տեղեկատվական պատերազմի հնարքներին:

Ի դեպ, սա վերաբերում է նաև մեր կողմից առանձնացված և 1-5-րդ կետերում շոշափված հարցերին: Դրանց դեպքում էլ չի կարելի հապճեպ ասել «Այո՛, հասկացա» և հույսը դնել իմացածի վրա: Խնդիրը միջազգային հարթակներում ներկայացնող պատասխանատուն պետք է

ծանոթ լինի մեր պետականության համար առանցքային հարցերի վերաբերյալ այլընտրանքային, հաճախ փոխբացառող տեսակետներին և մասնակցի դրանք կրող և հիմնավորող փորձագետների բանավեճին, որովհետև մտքերի ու հայացքների ազատ, անկաշկանդ բախման հարթակն է հենց ճշմարտության ծննդավայրը: Եթե Քրիստոսի ժամանակ թերթեր լինեին, նա, միևնույնն է, պետք է գյուղեգյուղ գնար կամ աշակերտներին բանավոր խոսքով ու քարոզով փոխանցեր իր վարդապետությունը, քանի որ հայացքների ու տեսակետների ազատ, բանավոր քննարկումին ոչինչ չի փոխարինում: Գրավոր տեքստը (այդ թվում նաև սույն տեքստը) այդ ուժը չունի: Ցավոք, տպավորությունն այնպիսին է, որ մեր «պատկան մարմիններն» ու պատասխանատուները դրա համար ուղղակի ժամանակ չունեն, երբ դրանից կարևոր գործ պետությունը չունի: Առաջարկվող մոտեցումը կարող է իրականացվել տարբեր կազմակերպական ձևերում: Դա կարող է արվել, օրինակ, «Օրբելի» վերլուծական կենտրոնում: Կարևոր է, որ ազգային հիմնարար հարցերի վերաբերյալ տարբեր լուծումներ առաջարկող խմբերը ընդդիմախոսեն միմյանց, բացահայտեն հակառակ տեսակետի խոցելի կողմերը: Առողջ, անշահախնդիր ընդդիմախոսությունը պետք է դառնա մեր ազգային կոլեկտիվ վերլուծական ծառայության պարտադիր հետազոտական տեխնոլոգիան, առանց որի մենք կշարունակենք մնալ հաճախ խնդրին չտիրապետող ինչ-որ անհատներից եկող, անվերապահ ճշմարտության հավակնող, «վերևից իջեցվող» և քննարկման ու քննադատական դաշտից դուրս գտնվող մտակաղապարների պատանդը:

Վերը մենք թվարկել ենք առանցքային կարևորության ազգային հիմնախնդիրներից ընդամենը մի քանի օրինակներ, որոնցում հայկական դիվանագիտության ակնհայտ թերացումները նպաստել են *Ադրբեջան-Արցախ* հակամարտության խեղված կերպարի ձևավորմանը միջազգային հարթակում ու նաև մեր ազգային գիտակցության մեջ դրանց ներդրմանը: Այդ օրինակները շատ են: Դրանք վերաբերում են փախստականության հարցին, այն հարցին, թե Ադրբեջանը Արցախին իբր դուրս է մղել բանակցային գործընթացից և այլն, և այլն: Հակամարտության կերպարը լուրջ շտկման կարիք ունի:

Ադրբեջան-Արցախ հակամարտության հայանպաստ կարգավորումը անհնարին է խնդրի խեղված այն կերպարի առկայությամբ, որն ինչ-որ իմաստով ձևավորվել է նաև մեր օգնությամբ: Եթե նույնիսկ մեզ հաջողվի խնդիրն ուժով լուծել, նրա աղավաղված կերպարը այդ ընթացքում մեզնից շատ զոհեր կպահանջի: Նկատենք, որ եթե 1988-1991-ին մենք միջազգային հանրությանը ներկայանում էինք որպես կոնֆլիկտի արդար կողմ, ապա այսօր ունենք *Խոջալուի* ու *Մադրիդի* բեռները, որոնցից պետք է անպայման ազատվել, ինչը ենթադրում է տեսական նոր որակի վերլուծություններ, նոր մոտեցումներ և խնդիրը այլոց ներկայացնող պատասխանատուների կողմից դրանք յուրացնելու

պատրաստակամություն: Հակամարտության խեղված կերպարը հենց բանակցային գործընթացում է աշխատում ընդդեմ մեզ, և այլ կերպ չէր էլ կարող լինել:

Այստեղ շարադրված մտքերը բնավ չեն կանխորոշում, որ պետական պատասխանատուն հենց նշված ձևակերպումներով դրանք պետք է դնի շրջանառության մեջ կամ ներկայանա բանակցություններին: Դրանք կարող են սույն վերլուծության մեջ առաջադրվող դրույթներից պաշտոնապես տարբերվել՝ պայմանավորված ռազմավարական կամ ընթացիկ ռազմաքաղաքական նկատառումներով: Դրանց մշակումը ինքնին այլ բնույթի աշխատանք է, բայց պահանջում է հարցին առնչվող թեմաների, այդ թվում նաև այստեղ բերվածների, խորը իմացություն: Ինչ վերաբերում է սույն հոդվածում առանձնացված թեմաներին, ապա դրանց իմացությունը, ինչպես դրանք այստեղ ներկայացված են, մեր կարծիքով, պարտադիր են հայ փորձագետների համար՝ գոնե որպես այլընտրանքային մոտեցման գաղափարներ: Բաքուն դրա համար հատուկ խմբեր է պահում: Մենք, կարծեմ, չունենք նման բան, դրա համար էլ հաճախ չենք տեսնում սևով սպիտակի վրա գրվածը, որի հաստատումը սույն հոդվածում դիտարկված օրինակներն են:

Բանալի բառեր – *Ռուսական կայսրության փլուզումը, թուրքական ինտերվենցիան, Արցախի լիազոր ներկայացուցիչների համագումար, ինքնորոշման ակտեր, ԽՍՀՄ տրոհում, ԼՂՀ (Արցախի) անկախության մասին ակտը*

АЛЕКСАНДР МАНАСЯН – *Арцахская проблема. Вопросы, подлежащие новому осмыслению.* – В «Карабахской папке» есть документы, без учета которых правовой, политический и информационный образы конфликта выглядят ущербно. В статье, в частности, рассматриваются документы, относящиеся к двум темам – *самоопределение* и *начало конфликта.* В XX в. население Нагорного Карабаха (Арцаха) дважды самоопределялось на территориях, оказавшихся вне юрисдикции какого-либо государства, т.е. на не принадлежащих никому, кроме тех, кто практически непрерывно владел ими в форме независимых или полузависимых государств. Первый раз акт самоопределения состоялся в июле 1918 г., когда после распада Российской империи новые республики в Закавказье были только провозглашены и не имели фактически контролируемых или международно признанных границ. В этих условиях Первый съезд полномочных представителей Арцаха провозгласил край неотъемлемой частью Республики Армения. Претензии на Арцах Азербайджанская Демократическая Республика (АДР) выдвинула после того, как вторгшаяся в Закавказье турецкая армия в сентябре 1918 г. захватила Баку, свергла законно избранные власти и передала город кавказским татарам. Второй акт самоопределения народ Арцаха осуществил в 1991 г. по ходу распада СССР, когда нынешняя Азербайджанская Республика отказалась от правопреемства Советского Азербайджана и провозгласила себя преемницей АДР, в составе которой не было Нагорного Карабаха. Таким образом, народ Арцаха и в 1918-м и в 1991 г. самоопределился на не принадлежащих никому, кроме него, территориях. Это не были акты сецессии; эти факты отсутствуют в истории конфликта и в наших мессиджах мировому сообществу.

Ключевые слова: *распад Российской империи, турецкая интервенция, съезды представителей населения Арцаха, акты самоопределения, распад СССР, провозглашение независимости НКР*

ALEKSANDR MANASYAN – ***Artsakh Issue. Questions that Need Reconsideration.*** – There are documents in the "Karabakh folder", without voicing which legal, political and informational images of the conflict are harmed. The article particularly deals with the documents relating to the themes of *self-determination* and the *beginning of the conflict*. In the 20th century, the people of Nagorno-Karabakh (Artsakh) twice became self-determined in the territories that were outside the jurisdiction of any other state, i.e. on the territories which belong to no one else except themselves, where they almost continuously controlled the forms of independent or semi-dependent states. It was in July 1918 that such an act first took place, when, after the collapse of the Russian Empire, the new republics in Transcaucasia were only proclaimed and had no actually controlled, or internationally recognized borders. Under these conditions, the First Congress of plenipotentiary representatives of Artsakh (Nagorno-Karabakh) proclaimed the region an integral part of the Republic of Armenia. The Democratic Republic of Azerbaijan (ADR) laid claims to Artsakh after the Turkish army invaded Transcaucasia in September 1918, captured Baku, overthrew the legally elected authorities and transferred the city to the Caucasian Tatars. The second such act of self-determination was made by the people of Artsakh in 1991, during the collapse of the USSR, when the present Republic of Azerbaijan refused to be the successor of Soviet Azerbaijan and declared itself the successor of the ADR, which did not include Nagorno-Karabakh. Thus, the people of Artsakh both in 1918 and in 1991 self-determined on territories that belong to no one but themselves. These were not acts of secession, and these facts of 1918-1991 were absent in the image of conflict and in our messages to the world community.

Key words: *the collapse of the Russian Empire; the Turkish intervention, the Congress of plenipotentiary representatives of Artsakh (Nagorno-Karabakh) population, the acts of self-determination of Artsakh; the collapse of the USSR, the act of proclaiming the independence of NKR (Artsakh)*

Ներկայացվել է՝ 05.06.2019
Գրախոսվել է՝ 07.09.2019
Ընդունվել է տպագրության՝ 21.11.2019